Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 28-ի N 521 - Ա
որոշման

«ԱՆԻ ԲԵԶԻԿՅԱՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր տարի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» կազմակերպության սաներից առնվազն 3-4-ը ընդունվում էին Երևանի տարբեր բուհեր: Սովորելու ընթացքում սաներն ունենում էին դժվարություններ Երևանում ապրելու հարցում և այդ իսկ պատճառով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» կազմակերպությունը Երևանում հիմնադրեց «Անի Բեզիկյան» երիտասարդական կենտրոնը, ուր այժմ ուսումնառության ընթացքում անվճար ապրում և սնվում են ոչ միայն ՏՀԿ-ի սաներ, այլև մարզերից եկած անապահով ընտանիքների լավ սովորող՝ մինչև 30 ուսանող: Այնտեղ կան բոլոր կոմունալ-կենցաղային պայմանները, որպեսզի ուսանողներն իրենց ուշադրությունն առավելագույնս կենտրոնացնեն ուսման վրա:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում էլեկտրական էներգիայի, գազի, ջրամատակարարման և ջրահեռացման, սննդի և տնտեսական ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև՝ շենքի և տարածքի վերանորոգման ու կահավորման համար օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը
3.	Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորում են՝ Իտալահայ բարերար Ալեքո Բեզիկյան՝ տարեկան մոտավորապես 9,000,000 դրամ, «Ռենովաբիս» ԲԿ՝ տարեկան մոտավորապես 8,000,000 դրամ, «Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամ՝ տարեկան մոտավորապես 2,500,000 դրամ, ՍՈԱՌ ԲԿ՝ տարեկան մոտավորապես 2,000,000 դրամ:
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀՔ Միաբանության «Տիրամայր Հայաստանի կուսաստան» կազմակերպությունը (ՀՀ, քաղ. Գյումրի, Ե. Չարենցի 6; ՀՎՀՀ՝ 05513266):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքի Թբիլիսյան 19 տուն հասցեում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին:

6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի արժեքն է մեկ տարվա կտրվածքով՝ մոտավորապես 21,500,000 դրամ, երեք տարվա կտրվածքով՝ 2019-2021 թթ. համար՝ մոտավորապես 64,500,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի Հանրապետության Շիրակի և Լոռու մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ գյուղերի անապահով ընտանիքների՝ 17-25 տարեկան՝ մինչև 30 երիտասարդ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է. այժմ որակավորման է ներկայացվում 2019-2021 թվականներին իրականացվելիք ծրագիրը;
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	• Շենքի շահագործման, կահավորման և կոմունալ-կենցաղային ծախսեր՝ տարեկան մոտավորապես 12,500,000 դրամ և մոտավորապես 37,500,000 դրամ՝ 3 տարվա՝ 2019-2021 թթ. համար: • Ուսանողներին վիտամիններով և հանքային նյութերով հարուստ տաք սննդի մատուցում՝ օրական 3 անգամ: Տարեկան սննդի ծախսը կազմում է մոտավորապես 8,000,000 դրամ և մոտավորապես 24,000,000 դրամ՝ 3 տարվա՝ 2019-2021 թթ. համար: • Կենտրոնի բնականոն կենցաղի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական պարագաներ՝ տարեկան մոտավորապես 500,000 դրամ և մոտավորապես 1,500,000 դրամ՝ 3 տարվա՝ 2019-2021 թթ. համար: • Ծրագրային և ֆինանսական աուդիտի իրականացման ծախսեր՝ տարեկան մոտավորապես 500,000 դրամ և մոտավորապես 1,500,000 դրամ՝ 3 տարվա՝ 2019-2021 թթ. համար:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Այս ծրագրի շրջանակներում ծախսվում է՝ - մոտավորապես 1,500,000 դրամ՝ էլեկտրականության համար կամ 4,500,000 դրամ և 3 տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար) - մոտավորապես 1,000,000 դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համար և 3,000,000 դրամ՝ 3 տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար) - մոտավորապես 300,000 դրամ՝ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 900,000 դրամ՝ երեք տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար) - մոտավորապես 2,700,000 թ. դրամ՝ գազի համար և 8,100,000 դրամ՝ երեք տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակա-հատվածի համար) - մոտավորապես 7,000,000 դրամ՝ շենքերի և տարածքի վերանորոգման և կահավորման համար և 21,000,000 դրամ՝ երեք տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար)

		- մոտավորապես 8,000,000 դրամ՝ սննդի համար և 24,000,000 դրամ՝ երեք տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար - 2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար) - մոտավորապես 500,000 դրամ՝ տնտեսական ապրանքների և գրենական պիտույքների համար և 1,500,000 դրամ՝ երեք տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար) - մոտավորապես 500,000 դրամ՝ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 1,500,000 դրամ՝ երեք տարվա՝ 2019-2021 թթ. համար (ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում՝ 2019 թ. հունվար-2021 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար)
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսեր այս ծրագրում չեն նախատեսված, քանի որ կազմակերպությունը վարչական և կազմակերպչական ծախսերի համար ունի առանձին ֆինանսավորում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև՝ Գյումրու քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ